ՍԱՂՄՈՍ 14

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Մարդկանց հիմարությունը և ամբարշտությունը	Անաստվածների հիմարությունը և Աստծո վերջնական հաղթանակը	Անամոթ և անարդար դարի դատապարտումը (տես՝ Սաղմոս 53)	Մարդկային ամբարշտությունը (տես՝ Սաղմոս 53)	Անաստվածի ճակատագիրը
<u>MT նախաբան</u> «Գլխավոր երաժշտին, Դավթի սաղմոսը»				
14:1-3	14:1	14:1	14:1	14:1
	14:2-3	14:2	14:2-3	14:2
		14:3		14:3
14:4-6	14:4-6	14:4-6	14:4	14:4
			14:5-6	14:5-6
14:7	14:7	14:7	14:7	14:7

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 14:1-3
[1]Անմիտն՝ իր սրտում ասաց, թե՝ Աստված չկա:
Ապականվեցին, գարշելի գործեր արեցին,
Չկա մեկը, որ բարին կատարի:
[2]ՏԵՐԸ երկնքից նայեց մարդկանց որդիներին,
Որպեսզի տեսնի, թե կա՞ արդյոք իմաստուն մեկը,
Որ Աստծուն փնտրի:

[3]Բոլորը շեղվեցին, միասին անպիտան դարձան.
Բարին կատարող չկա, գեթ մեկն էլ չկա:

14:1 «Անմիտ» Այս սաղմոսը գրեթե նույն Սաղմոս 53-ի պես է: Այս բառը (BDB 614 I) վերաբերում է այն մարդկանց, ովքեր պետք է ճանաչեին ՅԱՀՎԵԻՆ, սակայն ընտրում են ապրել այնպես, կարծես թե Նա չի ազդում իրենց կյանքերի վրա: Փիլիսոփայական իմաստով աթեիստներ չկային ՀՄԱ-ում, սակայն ուխտի ժողովրդից շատերը իրականում աթեիստներ էին (տես՝ 2 Օր.32:6, 21, 2 Թագ.13:13, Սաղմ.10:4,11,13, 53:1, 74:22, Եզեկ.13:3): Ղուկաս 12:48-ի առակը հաստատ վերաբերում է այս մարդկանց: Տե՛ս Հատուկ Թեմա. Անմիտ մարդիկ:

- Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է բնութագրվում «անմիտը»:
  1. նրանք ապականված են – BDB 1007, KB 1469, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ (այսինքն՝ կայացած վիճակ):
  2. գարշելի գործեր արեցին – BDB 1073, KB 1765, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ (այսինքն՝ կայացած վիճակ):

- **«գարշելի գործեր»** Տե՛ս ստորև տրված Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊՂԾՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)
SPECIAL TOPIC: ABOMINATION (OT)

Հիմնական նշանակությունը «նողկալի» կամ «գարշելի» է: Դա համարվում է հայտնի սահմանների դիտավորյալ խախտումը:
«Պղծություն» (BDB 1072, KB 1702) կարող է վերաբերել մի քանի բաների՝

1. Եգիպտացիների հետ կապված երևույթներին՝
   ա. նրանք գարշում էին եբրայեցիների հետ հաց ուտելուց, Ծնն. 43:32
   բ. նրանք գարշում էին հովիվներից, Ծնն. 46:34
   գ. նրանք գարշում էին եբրայեցիների զոհերից, Ելից 8:26

2. Իսրայելի գործողությունների հանդեպ ՅԱՀՎԵԻ ցուցաբերած զգացողությունների հետ կապված երևույթներ՝
   ա. անմաքուր կերակուր, 2 Օր. 14:3-20
   բ. կուռքեր, 2 Օր. 7:25, 27:15
   գ. հեթանոս վհուկները, 2 Օր. 18:9, 12
   դ. Մողոքին երեխաների զոհաբերությունը (այրելը), Ղևտ. 18:21, 20:2-5, 2 Օր. 12:31, 18:9, 12, 4 Թագ. 16:3, 17:17-18, 21:6, Երեմ. 32:35
   ե. Քանանացիների կռապաշտությունը, 2 Օր. 13:14, 17:4, 20:17-18, 32:16, Ես. 44:19, Երեմ. 16:18, Եզեկ. 5:11, 6:9, 11:18,21, 14:6, 16:50, 18:12
   զ. արատավոր կենդանիներ զոհաբերելը, 2 Օր. 17:1 (տես՝ 2 Օր. 15:19-23, Մաղ. 1:12-13)
   է. կուռքերին զոհեր մատուցելը, Երեմ. 44:4-5
   ը. նորից ամուսնանալ այն կնոջ հետ, որից նախկինում ամուսնալուծվել ես, 2 Օր.24:1-4
   թ. կանայք, որ տղամարդու հագուստներ են հագնում (հավանաբար Քանանի պաշտամունքներում), 2 Օր. 22:5
   ժ. կուլտային մարմնավաճառությունից գումարը (քանանացիների պաշտամունքի մեջ), 2 Օր. 23:18
   ի. Իսրայելի կռապաշտությունը, Երեմ. 2:7
   լ. միասեռականությունը (հավանաբար քանանացիների պաշտամունքի մեջ), Ղևտ. 18:22, 20:13
   խ. կեղծ կշռաքարերի պգտագործումը, 2 Օր. 25:15-16, Առակ. 11:1, 20:23

ծ. կերակրի օրենքների խախտումը (հավանաբար քանանացիների պաշտամունքի մեջ) 2 Օր. 14:3

3. Օրինակներ իմաստասիրական գրականությունից.
   ա. Հոբ 30:10 – Հոբը իր հասարակությանը
   բ. Սաղմոս 88:8 – սաղմոսերգուն իր ծանոթներին
   գ. Առակացում՝
      1) Առակ. 3:32 – խոտորված մարդը
      2) Առակ. 6:16-19
         (ա) ամբարտավան աչքեր, Առակ. 6:17ա
         (բ) ստախոս լեզու, Առակ. 6:17ա
         (գ) մարդասպան, Առակ. 6:17բ
         (դ) չար մտքեր հնարող, Առակ. 6:18ա, 15:26
         (ե) չարագործ, Առակ. 6:18բ
         (զ) անիրավ՝ սուտ վկա, Առակ. 6:19ա
         (է) եղբայրների միջև տարաձայնություն՝ կռիվ սերմանող, Առակ. 6:19բ
      3) Առակ. 11:1, 20:10, 23 – խաբեբա առևտրականները
      4) Առակ. 11:20 – ծուռ սիրտ ունեցողները
      5) Առակ. 12:22 – ստախոս շուրթերը
      6) Առակ. 15:8, 21:27 – չարամիտների զոհերը
      7) Առակ. 15:9 –ամբարշտի ճանապարհը
      8) Առակ. 16:5 – հպարտ սիրտ ունեցողները
      9) Առակ. 17:15
         (ա) ամբարշտին արդարացնողը
         (բ) արդարին դատապարտողը
      10) Առակ. 28:9 – նա, ով խախտում է օրենքը
4. Պարբերաբար կրկնվող մի վախճանաբանական արտահայտություն կա՝ «ավերմունքի պղծություն», որը կիրառվում է Դանիելի գրքում (տես՝ Դան. 9:27, 11:31, 12:11): Այն կարծես թե նկատի ունի երեք տարբեր իրադարձություններ (բազմակի իրականացմամբ մարգարեություն)՝
   ա. Անտիոքոս IV Էպիֆանեսը, որը միջկտակարանյան Մակկաբայեցիների շրջանում էր (տես՝ 1 Մակ. 1:54, 59, 2 Մակ. 6:1-2):
   բ. Հռոմեացի գեներալ (հետագայում կայսրը) Տիտոսը, ով թալանեց Երուսաղեմը և կոր—ծանեց տաճարը մ. թ. 70թ-ին (տես՝ Մատթ. 24:15, Մարկ. 13:14, Ղուկ. 21:20):
   գ. վերջին ժամանակի առաջնորդը, որը կոչվում է «անօրինության մարդը» (տես՝ 2 Թեսաղ. 2:3-4) կամ «Հակաքրիստոսը» (տես՝ 1 Հովհ. 2:18, 4:3, Հայտնություն 13):

❖ **«չկա մեկը, որ բարին կատարի»** Սա ընդհանուր սահմանում է մեղավոր մարդկության՝ անգամ ուխտի ժողովրդի հոգևոր վիճակի մասին: Այն մշակված է Սաղմոս 14:2-3-ում: Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես է նկարագրվում ընկած մարդկությունը՝

1. ոչ ոք բարիք չի գործում՝ Սաղմ. 14:1,3 (ներհատուկ)
2. ոչ ոք չի հասկանում
3. ոչ ոք Աստծուն չի փնտրում
4. բոլորը խոտորվեցին (տես՝ Սաղմ. 14:3 գրառումը)
5. բոլորը ապականվեցին

Կարող ենք հստակ տեսնել Ծննդոց 3-ի ազդեցությունը ամբողջ մարդկության վրա: Պողոսը մի հզոր մեջբերում է կատարում մարդկային ըմբոստության շուրջ Հռոմ. 3:9-18,23-ում: Նա մեջբերում է Սաղմ. 14:1-3, 53:1-4, 5:9, 140:3, 10:7, Ես. 59:7-8, Սաղմ. 36:1: Այս ճշմարտությունը ավետարանի

առաջին ճշմարտությունն է (Հռոմ.1:18-3:18): Ավետարանը «բարի լուր» է վատ լուրերի առկայությամբ:

14:2 «ՏԵՐԸ երկնքից նայեց» ՅԱՀՎԵՆ պատկերացվում է, որ բնակվում է երկնքում (տես՝ Հատուկ Թեմա. Երկինք), որտեղից Նա տեսնում է և գիտի ամեն բան, ինչ տեղի է ունենում երկրի վրա (գործեր, շարժառիթներ, մտադրություններ, տես՝ Սաղմ.33:13,14, 102:19, Հոբ 28:24): ՅԱՀՎԵՆ, ով մեծապես տարբերվում է ոկւռքերից, տեսնում է, գիտի և գործում է:

14:3 «նրանք շեղվեցին» ՅԱՀՎԵԻ ուխտը հստակ նշված արահետ է՝ ճանապարհ, ուղի: նրա ժողովուրդը պետք է մնային այդ ուղիղ (այսինքն՝ արդար) և նեղ ճանապարհի մեջ, սակայն չմնացին (տես՝ Ելից 32:8, 2 Օր.9:12, 11:16, 17:11, 17, Դատ.2:17, 1 Թագ.12:20, 4 Թագ.22:2, Երեմ.5:23, 17:13, 32:40): Շեղվելը տգիտության քայլ չէր, այլ մտադրված ապստամբության:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 14:4-6
4Մի՞թե գիտություն չունեն բոլոր անիրավություն գործողները,
Որոնք հաց ուտելու *նման* Իմ ժողովրդին են ուտում
Ու ՏԻՐՈՋԸ չեն կանչում:
5Ահա նրանք մեծ վախի մեջ են,
Քանի որ Աստված արդարների սերնդի մեջ է:
6Աղքատի խորհուրդն ամոթ համարեցիք,
Որովհետև նրա ապավենը ՏԵՐՆ է:

14:4-6 Այս պարբերությունը մեծացնում է «չիմանալու» հետևանքները (BDB 393, KB 390, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Հատուկ Թեմա. Իմանալ): Ամբարիշտների գործողությունները աղքատի, կարիքավորի և նրանց դեմ, որոնք չունեն հասարակության մեջ ձայն կամ իշխանություն, կդատվեն Աստծո՝ նրանց պաշտպանի կողմից (տես՝ 2 Օր.10:17-19, 14:29, 24:17, 19-22, 26:12,13, 27:19):

Նա է նրանց «ապաստանը» (BDB 340, տես՝ Սաղմ.2:12, 5:11, 34:22): Նրանց վրա հարձակվել նշանակում է հարձակվել Նրա վրա: Նա կպաշտպանի նրանց:

14:4

NASB, NKJV, NRSV, LXX	**«ՏԻՐՈՋԸ չեն կանչում»**
TEV	**«նրանք երբեք ինձ չեն աղոթում»**
NJB, REB	**«նրանք երբեք չեն կանչում ՅԱՀՎԵԻՆ»**
JPSOA	**«չեն խնդրում Տիրոջը»**

ԲԱՅԸ (BDB 894, KB 1128, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) տարածված բայ է, որը կիրառվում է տարբեր կերպերով (այսինքն՝ ունի ընդարձակ իմաստային դաշտ): Սաղմոսներում այն ունի մի քանի կիրառությունը՝

1. արարողությունների և աղոթքի ժամանակ քահանաների համար՝ Սաղմ.99:6
2. ուխտի ժողովրդի աղոթքների համար՝ Սաղմ.4:3, 20:9, 50:15, 86:5, 91:15, 107:6,13, 116:2, 141:1:
3. ազգերը չեն կանչում ՅԱՀՎԵԻՆ (այսինքն՝ Սաղմ.79:6), սակայն Իսրայելը կանչում է՝ Սաղմ. 14:4, 50:15, 53:4:

ՆԿ-ում այս ՀԿ-յան պաշտամունքի արտահայտությունը (այսինքն՝ ծես և աղոթք) դառնում է Հիսուսի միջոցով ՅԱՀՎԵԻ հետ փոխհարաբերության մեջ մտնելու կերպ (տես՝ Գործք 2:21, 22:16, Հռոմ.10:9-13):

Մենք կոչվում ենք ժողովուրդ, որը կանչում է Տիրոջ անունը և ապա կանչվում ենք ծառայության: Աղոթքից զուրկ կյանքը նշան է սուտ հավատքի և գործնական աթեիզմի:

14:5 «/այնտեղ/ ահա նրանք մեծ վախի մեջ են» Բառացի սա նշանակում է «նրանք վախով էին վախեցած» (*Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ և նույն արմատի ԳՈՅԱԿԱՆ - BDB 808, KB 922):

Քանի որ «այնտեղը» չսահմանված է, ոմանք այն միացնում են արտահայտության վերջաբանին և ավելացնում «որտեղ չկա վախ» (AB, NJB):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 14:7
7Երանի՛ թե Սիոնից գար Իսրայելի փրկությունը.
Երբ ՏԵՐՆ Իր ժողովրդին գերությունից վերադարձնի՝
Հակոբը ցնծալու է, ու Իսրայելն ուրախ է լինելու:

14:7 «Երանի՛ թե Իսրայելի փրկությունը» Սա ՅԱՀՎԵԻ անուն է, որը բնակվում է Սիոնում (այսինքն՝ Մորիա լեռը՝ տաճարը): Նկատե՛ք երկրորդ տողում «ՅԱՀՎԵԻ» զուգահեռը:

Այս համարը նաև գտնվում է Սաղմ. 53:6-ում, որը նշանակում է, որ հնարավոր է այն լինի առակատիպ: LXX այս առաջին տողը դարձրել է հարցական:

❖ **«վերադարձնի»** Այս նույն ԲԱՅԸ (BDB 996, KB 1427) նաև կարող է նշանակել «ապաշխարել» կամ «վերադառնալ»: Սակայն այս համատեքստում Իսրայելին կոչ չի արվում ապաշխարության:

«Վերականգնել» (BDB 996) և «բախտ» (BDB 986) բառերի միջև կա բառախաղ: NET Աստվածաշնչի ծանոթագրության մեջ տրվում է «վերադառնում է վերադարձնելով իր ժողովրդին»:

❖ **«Հակոբ... Իսրայել»** Հակոբ նահապետը ուներ տասներկու երեխա, որոնք դարձան տասներկու ցեղեր: Հակոբի անունը փոխվեց Իսրայելի Ծնն. 32:22-32-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼ (անունը)
SPECIAL TOPIC: ISRAEL (the name)

I. Այս անվան նշանակությունն անհայտ է (BDB 975):
   Ա. *Էլը* Պահպանում է
   Բ. Թող *Էլը* Պահպանի (ՀԱՅՑԱԿԱՆ)
   Գ. *Էլը* Համբերում է
   Դ. Թող *Էլը* Կռվի
   Ե. *Էլը* Պայքարում է
   Զ. Նա ով պայքարում է Աստծո հետ (Ծնն. 32:28)
   Է. Վստահելի (IDB, հատոր՝ 2, էջ՝ 765)
   Ը. Հաջողակ
   Թ. Ուրախ
II. Կիրառությունը ՀԿ-ում՝
   Ա. Հակոբի անունը (տեղը բռնող, զարշապար բռնող, BDB 25:26) փոխվեց Հաբոկ գետի մոտ հոգևոր էակի հետ գոտեմարտի բռնվելուց հետո (տես՝ Ծնն. 32:22-32, Ելից 32:13): Հաճախ եբրայերեն անունների նշանակությունները հնչյունային խաղիկներ են, ոչ թե ստուգաբանություններ (տես՝ 32:28): Նրա անունը դառնում է Իսրայել (օր՝ Ծնն. 35:10):
   Բ. Այն հետագայում դառնում է բոլոր իր տասներկու որդիների հավաքական անվան համար կիրառելի անուն (օր՝ Ծնն. 32:32, 49:16, Ելից 1:7, 4:22, 28:11, 2 Օր. 3:18, 10:6):
   Գ. Այն հետագայում բնութագրելու էր նախքան ելիցը (տես՝ Ծնն. 47:27, Ելից 4:22, 5:2) և Ելիցից հետո (տես՝ 2 Օր. 1:1, 18:6, 33:10) տասներկու ցեղերից կազմված մի ազգի:
   Դ. Սավուղի, Դավթի և Սողոմոնի միացյալ միապետությունից հետո ցեղերը բաժանվեցին Ռոբովամի իշխանության ներքո (տես՝ 3 Թագավորաց 12):

1. նույնիսկ նախքան պաշտոնական բաժանումը սկսում է տարբերությունը (օր՝ 2 Թագ. 3:10, 5:5, 20:1, 24:9, 3 Թագ. 1:35, 4:20):
2. կազմում է հյուսիսային ցեղերը նախքան Ասորեստանի կողմից Ք.Ա. 722թ-ին Սամարիայի անկումը (տես՝ 4 Թագավորաց17):

Ե. Կիրառվում է Հուդայի համար մի քանի տեղերում (օր՝ Եսայի 1, Միքիա 1:15-16):

Զ. Ասորական և Բաբելոնյան գերությունից հետո այն կրին դառնում է Հակոբի բոլոր ժառանգների համար որպես հավաքական անուն (օր՝ Ես. 17:7,9, Երեմ. 2:4, 50:17,19):

Է. Ի տարբերություն քահանաների կիրառվում էր առանձնացված ծառայողների համար (տես՝ 1 Մնաց. 9:2, Եզրաս 10:25, Նեեմ. 11:3):

❖ **«ցնծալու է. . . ուրախ է լինելու»** Այս երկու ԲԱՅԵՐԸ մատնացույց են անում վերականգնման արդյունքը: Եբրայերեն ԲԱՅԵՐԸ իրենց իմաստը ստանում են համատեքստից: Այս համատեքստը ապագայի վերաբերյալ է՝

1. ցնծալ – BDB 162, KB 189, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ
2. ուրախանալ – BDB 970, KB 1333, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ նկատի ունի անմիտը այս հայտարարությամբ. «Աստված չկա»:
2. Արդյո՞ք ՀԿ-ը սովորեցնում է, որ բոլոր մարդիկ մեղավոր են:
3. Ի՞նչ է նշանակում «կանչել Տիրոջը»:
4. Արդյո՞ք Սաղմ. 14:7-ը ակնարկում է գերություն: